# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## Ա Ր Մ Ա Վ Ի Ր Ի   Մ Ա Ր Զ Պ Ե Տ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«16» սեպտեմբերի 2025թ. ՆՄՈ/846-Ա

ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N393 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ Գ.ՆԺԴԵՀԻ ԱՆՎԱՆ N 8 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 5.4-րդ և 6-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի հուլիսի 3-ի N ՄՈ/635-Ա որոշումը.

**որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2017 թվականի հոկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N393 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

   1) որոշմամբ հաստատված N52 հավելվածի «Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2) հաստատել «Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ համաձայն հավելվածի:

2. սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Восстановимая подпись

X

ՎԱՀՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

**ՄԱՐԶՊԵՏ՝** Подписано: KHACHATRYAN VAHRAM 2902840179 **Վ. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2025 թվականի սեպտեմբերի 16-ի ՆՄՈ/846Ա որոշման

«Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2017 թվականի հոկտեմբերի 18-ի N393 որոշման

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ |
|---|
| 1. «Վաղարշապատի Գ.Նժդեհի անվան N 8 հիմնական դպրոց» |

Գլխավոր քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան

Восстановимая подпись

X

ԱՐԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023